ՄԻՆՉԵՎ 2018Թ. ՀՈՒԼԻՍԻ 31-Ը ԶՈՐԱՑՐՎՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ՝
2018Թ. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԿԱՐԳԸ

2014 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է թիվ 564-Ն որոշումը /ուժի մեջ է մտել 2014թ. հունիսի 12-ին/՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: Այդ որոշման համաձայն մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողներն իրավունք են ստանում մասնակցել բուհերի տվյալ տարվա ընդունելության մրցույթին՝ մինչև զորակոչվելն ստացած միասնական քննությունների վկայագրով՝ օգտվելով բանակից զորացրվածների համար սահմանված արտոնություններից: Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման 107 կետի համաձայն պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո 3 տարվա ընթացքում, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում, անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցույթից դուրս՝ առանձին մրցույթով՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված և բանակից զորացրվածների համար ըստ մասնագիտությունների տրամադրված տեղերում:

Անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդները վճարովի ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով:

Եթե բանակից զորացրված դիմորդները հայտագրել են միայն վճարովի ուսուցման տեղերի մասնագիտություններ, բուհ են ընդունվում մրցույթից դուրս:

Բանակից զորացրվածների համար, համաձայն ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման 24 կետի, բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար բուհերում դիմում-հայտ լրացնելու և փաստաթղթերը ներկայացնելու ժամկետ է սահմանված հունիսի 25-ից հուլիսի 2-ը:

1. <u>Ովքեր են կարող դիմել բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար</u>.
   բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել տվյալ տարվա գարնանային-ամառային զորացրումից մինչև հուլիսի 31ը զորացրվող զինծառայողները, եթե նրանք ունեն մինչև զորակոչվելը ստացած միասնական քննությունների վկայագիր:

2. <u>Զորացրվող զինծառայողները երբ կարող են դիմել բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար.</u>
   զորացրվող զինծառայողները լիազորված անձի միջոցով հունիսի 25-ից հուլիսի 2-ին կարող են դիմել այն բուհ, որն առաջինը պետք է հայտագրեն իրենց դիմում-հայտում:

3. <u>Ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն զորացրվող զինծառայողները՝ բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար.</u>

զորացրվող զինծառայողները պետք է ներկայացնեն՝

- զորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանք այն մասին, որ զինծառայողի զորացրումը տեղի է ունենալու մինչև հուլիսի 31-ը /կից ներկայացվում է զորամասի հրամանատարի կողմից տրվող տեղեկանքի նմուշը/,
- զորացրվող զինծառայողի կողմից տրված լիազորագիր, որը լիազորագրում նշված անձը ներկայացնում է բուհի ընդունող հանձնաժողովին /կից ներկայացվում է լիազորագրի նմուշը/ և բուհի ընդունելության դիմում-հայտում հայտագրում է բուհերի ընդունելության մրցույթին մասնակցության մասնագիտությունները՝ լիազորագրում նշված հերթականությամբ,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը, 6 հատ 3x4 չափսի լուսանկար,
- ավարտական փաստաթուղթ /ատեստատ կամ դիպլոմ/:

Տեղեկանք

Սույն տեղեկանքը տրվում է զինծառայող
_____-ին,
անուն, հայրանուն, ազգանուն
ծնված _____ , անձնագրի համար _____, առ այն, որ նա զորացրվելու է մինչև 2018թ. հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում: Սույն տեղեկանքը տրվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 26.04.2012թ. թիվ 597-Ն որոշման 40 և 107 կետերի՝ բուհերի ընդունելության 2018թ. հուլիսին տեղի ունեցող մրցույթին մասնակցելու և պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների արտոնություններից բուհերի ընդունելության մրցույթում օգտվելու համար:
_____ զորամասի հրամանատար՝
_____
անուն, ազգանուն, ստորագրություն կ.տ.

Լիազորագիր

<< >> _____ 2018թ.

Ես՝ _____
անուն, հայրանուն, ազգանուն
ծնված _____,
անձնագիր _____,
լիազորում եմ _____-ին ,
անուն, հայրանուն, ազգանուն
ծնված _____,
անձնագիր _____,
Հայաստանի Հանրապետության կառավարության 26.04.2012թ. թիվ 597-Ն որոշման 40 կետի համաձայն սույն թվականի հունիսի 25-ից հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերս ներկայացնել բուհի ընդունող հանձնաժողովին և բուհի ընդունելության դիմում-հայտը իմ անունից լրացնել՝ նշելով բուհերի ընդունելության մրցույթին մասնակցության մասնագիտությունները հետևյալ հերթականությամբ.
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____:

Սույն լիազորագիրը տրվում է մինչև 2018թ. հուլիսի 2-ը ժամկետով:

Լիազորագիրը տրվել է << >> _____ 2018թ.
Լիազորող անձ՝ _____
անուն, ազգանուն, ստորագրություն
Լիազորագիրը հաստատված է _____ զորամասի հրամանատարի
կողմից _____
Կ. Տ անուն, ազգանուն, ստորագրություն